կոծ Սիւրիան վերջնապէս հանգիստ էր առել, եւ հայկական ուշիմ, բարերար եւ շինարար ոգին իր հզօր եւ իմաստուն թագաւորի ղեկավարութեամբ ամբողջ Փոքր Ասիան մղում էր դէպի մի լուսաւոր ու բարգաւաճ ապագայ: Եւ այս բոլորը հաղիւ մի քսանհինգ տարում:

Ահա այս է որ Պլուտարքոս քինախնդիր եւ անիրաւ լեզուով անուանում է «քսանհինգ տարուայ բռնութիւն» եւ Փոքր Ասիայի մեծագոյն միապետին՝ անարժանապէս կոչում է «բարբարոս»:

Տիգրանի պարտութիւնը եւ նրա հիմնած պետութեան բեկումը դուռ հայ ազգային խնդիր չէ: Դա տիեզերական արժէք ունեցող խոշոր պատմական իրողութիւն է, որի հետեւանքները ծանրացան ոչ միայն Հայաստանի, այլ եւ համակ Ասիոյ բախտի վրայ: Դարերից ի վեր չարչարուած եւ ոտնակոխ եղած Փոքր Ասիան յանձին Տիգրանի վերջապէս գտել էր քաղաքական միութեան ուղիղ ճամբան՝ քայլելու համար դէպի քաղաքակրթական միութիւնը:

Արեւելքն ու Արեւմուտքը իրենց Կիւրոսներով, Դարեհներով եւ Ալեքսանդրներով (Մակեդոնացի) մեծ ու բանուկ բոլվարի էին վերածել ամբողջ Փոքր Ասիան, ուրտեղից աշխարհակալ ազգերը անցնում էին փոթորիկների պէս՝ տրորելով ու արիւնոտելով իրենց բիրտ կրունկների տակ տեղական ցեղերը: Եւ առաջին անգամն էր, որ Փոքր Ասիայի ժողովուրդների ծոցից՝ Հայաստանից բարձրանում էր մի մեծազօր արքայ եւ դիտակից այս տառապած ու անիրաւուած ժողովուրդների շահերին փակում էր երկու կողմից շարժուող աշխարհակալների ճամբան՝ «Փոքր Ասիան, տեղացիներին» բարձր նշանաբանով:

Եւ յատկապէս Հայաստանն էր կոչուած ամբողջ Փոքր Ասիայում այս մեծ քաղաքական առաքելութիւնը կատարելու՝ իր աշխարհագրական բացառիկ դիրքով: Հայկական բարձրաւանդակը իր երկնաբերձ, ահարկու լեռներով ու մթին կիրճերով, ամբողջ մեր աշխարհի կեդրոնական սարահարթը, որ մի բնական միջնաբերդի պէս իշխում էր իր շրջապատի բոլոր երկիրներին եւ իջնում էր մէկ կողմից դէպի Կասպից ծով, Պարսկաստան եւ Միջագետք, ու միւս կողմից՝ դէպի Սեւ ծով ու Միջերկրական: Համակ Արեւելքի մեծ դարպասն էր Հայաստանը, եւ Տիգրանն էր, որ առաջինն ըմբռնեց իր հայրենիքի առաջնակարգ քաղաքական ու զինուորական արժէքը ու հանճարեղ մտածումով եւ կուռ կամքով վճռեց այդ դրան բանալին իր ստեղծագործ ձեռքերում պահել ի փառս Հայաստանի եւ ի բարօրութիւն ամբողջ Փոքր Ասիայի:

Եւ հրաշք կատարեց Մեծ թագաւորը:

Մշտապէս հակամարտ եւ անվերջ արիւնահեղ բախումներով իրար բզքտող մանրմունր բաղմաթիւ ցեղեր վերջապէս միանում էին ու հանդարտւում հայոց Արքայից Արքայի դայիսոնի տակ: Երեւոյթը նոր էր, եւ իր բարերար հետեւանքները պէտք է լինէին անհաշիւ ու բազմազան: Փոքր Ասիան դադարում էր աշխարհակալների բուլվարը լինելուց եւ ձգտում էր դէպի իր ինքնուրոյն զարգացման եւ պետական կեանքը:

Հռոմի տիրապետութեան հետ կապուած քաղաքակրթական առաւելութիւնները անհնար է ժխտել, բայց ներկայ դէպքում Փոքր Ասիայում նոր բարձրացող հայ կայսրութեան վրայ քալելով Հռոմ անթիւ գեղեցիկ կարելիութիւններ ի դերեւ հանեց եւ անհնարին ու անդարմանելի վնասներ հասցրեց Արեւելքի ժողովրդներին: Խորտակելով Փոքր Ասիական նորակազմ ու խոստմնալից միութիւնը, որ հայ քաղաքական հանճարի գործն էր, եւ կիրառելով «բաժանեա դի տիրեսցես»ի քաջածանօթ մեթոդը, Հռոմը մի հարուածով վերականգնում էր այս դժբախտ երկրներում նախկին ստորադաս, անջիղ, անողնաշար վիճակը եւ թշուառ Փոքր Ասիան վերստին դառնում էր Արեւելքի եւ Արեւմուտքի անվերջ ու արիւնոտ պայքարների համար մի արտասուելի թատերաբեմ: Տիգրանի հիմնած զօրաւոր պետութիւնը, որ բնական եւ անփոխարինելի գաղափարական եւ քաղաքակրթական միջնորդ պիտի լինէր Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ, բարձրանում էր մէջտեղից, ազատ ասպարէզ թողնելով չորս կողմից վերստին արշաւող ժողովուրդներին:

Փոքր Ասիան, այնուհետեւ, այլեւս երբեք իր ինքնուրոյնութիւնը, միութիւնը եւ